ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

(ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

1.— ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ի երեկոյեան Երեւանում սրտի հիւանդութիւնից մեռել է արեւելահայ ծանօթ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը եւ թաղուել նոյն տեղ, Հոկտեմբերի 2-ին: Այս տխուր դէպքը առիթ է տալիս մեզ, մի համառօտ ակնարկ նետելու բանաստեղծի կեանքի եւ գրական գործունէութեան վրայ, որ բաղդատաբար քիչ է ծանօթ արտասահմանի հայ ընթերցողներին:

Դժբախտաբար, մենք մեր ձեռքի տակ չունինք հանգուցեալի երկերի լրիւ ժողովածուն, այլ 1912-ին լոյս տեսած մի անկատար հրատարակութիւն միայն, այլ եւ «Հայ Գրողներ» հատորում եւ ուրիշ ձեռնարկներում*) տեղ գըտած նրա մի շարք հատընտիր ոտանաւորները: Բնական է ուրեմն, որ այս ակնարկը մօտաւոր դաղափար միայն կազմել տալ կարող է Յովհաննիսեանի կեանքի եւ ստեղծագործութեան մասին:

* * *

Յովհաննէս Յովհաննիսեան ընիկ Վաղարշապատցի էր, ծնուած Հայաստանի սրտում, 1864 թուականի ապրիլ 26-ին: Հայրը զբաղւում էր գիւղական տնտեսութեամբ եւ հազիւ հայթայթում իր ընտանիքի օրուան պարէնը: Լինելով ի բնէ խելացի եւ ուսումնասէր մարդ, նա ոչինչ չէր խնայում իր զաւակների կրթութեան համար:

Դեռ վեց տարեկան հասակում՝ փոքրիկ Յովհաննէսը զրել-կարդալ է սովորում իր հօր մօտ, ապա մտնում իր հայրենի գիւղի ծխական դպրոցը:

Այդտեղից նա անցնում է ժամանակի գիտական-վարդապետ Բաստամեանցի դպրոցը, որ նա բաց էր արել Ս. Գայիանէի վանքում (Էջմիածնի վանքին կից), եւ որի վանահայրն էր նա: Այդ դպրոցն էլ մի տարի յաճախելուց յետոյ՝ Յովհ. ընդունւում է Երեւանի պրոգիմնազիան, ուր եւ մնում է մինչեւ 1877 թուականը: Հայրը յաջողել էր այդ միջոցին՝ իր որդուն Մոսկուայի Լազարեան ճեմարանի ձրիավարժ թեկնածու-սաների շարքը ընդունել տալ: Եւ ահա, 1877 թուականին 13-ամեայ Յովհաննիսեան ընդունւում է յիշեալ ճեմարանի 3-րդ դասարանը: 1883 թուականին նա աւարտում է այդ հիմնարկութեան գիմնազիական դասընթացքը եւ մտնում Մոսկուայի համալսարանի պատմա-լեզուաբանական ֆակուլտէտը (բաժանմունքը), որ եւ վերջացնում է 1888 թուականին:

Համալսարանն աւարտելուն պէս՝ Յովհաննիսեան ոտք է դնում մանկավարժական ասպարէզը: Այդ ժամանակ Էջմիածնի Գէորգեան ճեմարանի տեսուչն էր Նահապետ վարդապետ Նահապետեանը: Սա նոր էր հոգեւորունակ սքեմ հագել: Եղել էր, տարիներ շարունակ, Ներսիսեան դպրոցի տեսուչ. յայտնի մաթեմատիկոս եւ բնագէտ էր: Մտնելով վանք եւ ստանձնելով Գէորգեան ճեմարանի տեսչութիւնը, Նահապետեան նպատակ ունէր գիտական հոգեւորականների մի նոր սերունդ պատրաստել, այլ եւ մասնագէտ-ուսուցիչներ, հայ դպրոցների համար,— հարկաւ իր ուղղութեամբ եւ հասկացողութեամբ, որ շեշտուած պահպանողականութեան կնիքն էր կրում:

Նահապետեան ճեմարանի կրթական-ուսումնական մակարդակը բարձրացնելու նպատակով ուսուցչական պաշտօնի էր հրաւիրել ժամանակի մանկավարժական կարող ուժերից մի քանիսը: Դրանց շարքում էին դտնւում՝ հայկարան Կարապետ Կոստանեան, պատմաբան Ստեփանոս Պալասանեան, մանկավարժ Սեդրաք Մանտինեան եւ մի քանի ուրիշներ: Եւ ահա, ուսուցչական այդ կազմի անդամ

---

*) Կենսագրական եւ փաստական տեղեկութիւնները քաղում ենք այդ հրատարակութիւններից, օգնութեան կանչելով մեր յիշողութիւնը. Ա.